իւր և ի մէջ ժողովրդեան, եթէ ոչ՝ գալով առ կաթողիկոսն և առնլով զօրհնութիւն ի նմանէ, խորհեցաւ գալ ի Կ.պօլիս. և զի չունէր պաշար ճանապարհի՝ վասն այնորիկ ետ նմա 2000 ղուռուչս՝ Խօջայ Սիմոն Թօխադցի վաճառական, որդի մահդասի Մարկոսին. այսու ելեալ հկն ի Կ. պօլիս: Զայս տեսեալ ժողովրդականացն, և նոքա առաքեցին զԽաչգօ, մին ի դաւտւորացն Հայոց՝ ի կողմանէ իւրեանց. և սա եւս եկն ի Կ. պօլիս, բայց ընդ այլ ճանապարհաւ. և հանդիպեցին երկոքինս կաթողիկոսին: Արդ զրաւ գործոյն այս եղեւ, զի եպիսկոպոսն չորս զլխագրութիւնս յանձն առեալ, և ձեռնագրով իւրով դրոշմեալ տացէ կաթողիկոսին. Ա. զի Նիկոլն և իւր հետեւողք եկեղեցականք և աշխարհականք զդաւանութիւն Լուսաւորչին և զնորին աթոռակալացն՝ խոստովանեսցի: Բ. զի զարարողութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյ արասցէ ինքն և իւր հետեւողքն: Գ. զի յաջորդ նորա ի կաթողիկոսէն Էջմիածնի օրհնեսցի եպիսկոպոս, և նոյնսւմ հնազանդ: Դ. զի ինքն միայն ի պատարագին յիշեսցէ զանուն փափին և ոչ այլ ոք յեկեղեցականաց. և ոչ զկնի իւր նստեալ եպիսկոպոսն յիշեսցէ զանուն փափին: Նա և մի ինքն մի խառնեսցէ զկուր ի բաժակ պատարագին: Արդ զայս ամենայն, կամ զսոցին նմանս, դրոշմեալ Նիկոլն՝ ետ կաթողիկոսին և առ Խաչգօ դաւտւորն, վասն առ յապայն զգուշութեան: Ապա կաթողիկոսն արձակեաց զՆիկոլն ի բանտադրանաց. տուեալ նմա նոմոս եպիսկոպոսական իշխանութեան և գիր օրհնութեան ի վերայ ժողովրդեան, արձակեաց ի խաղաղութիւն՝ գալ ի տեղի իւր: